ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Սրանից 59 տարի առաջ երբ James Cholmers ը նշանադրոշմը հնարեց, այն ժամանակ ամբողջ աշխարհը զարմացման նշաններ ցոյց տուեց։ (Դումդէսում)։ Սուրհանդակային-հաղորդակցութեան այս ձևը առաջին անգամ մուտք գործեց Անգլիայում 1840 թ. մայիսի 6-ին. 1849—50 թ. Գերմանիայում՝ Բայրէնի և Պրուսիայի թագաւորութեան մէջ և նոյն թուի յունիսի 1-ին Աւստրիայում։ Իսկ այսօր դեռ 60 տարի չ՚անցած աշխարհիս բոլոր մեծ ու փոքր քաղաքակրթեալ ազգերի և կառավարութիւնների մէջ մուտք է գործել որպէս մի կանոնաւորեալ և հեշտ միջոց հաղորդակցութեան։ Իսկ նշանադրոշմների գիւտից յետոյ դեռ քսան տարի ուղիղ չ՚անցած՝ վաթսունական թուերի սկզբներում Գերմանիայում, Անգլիայում և Ֆրանսիայում մեծ ցանկութիւն է զարթնում զանազան ազգութեանց մէջ գործածուած նշանադրոշմները հաւաքել։ Այսօր արդէն այդ նամակադրոշմները մի հարուստ գրականութիւն ունին. զանազան ամսաթերթեր, օրաթերթեր զբաղուած են այդ հարցով և հարիւր հազարաւոր երկու սեռի անհատներ հաւաքում են դոցա և կան յատկապէս շատ մարդիկ, որոնք նշանադրոշմների վաճառականութեամբ են զբաղուած։ Նշանադրոշմների (մարկաների) հաւաքումը բացի զուտ վաճառականական, սիրոյ, ցանկութեան տեսակէտից և ունի զուտ մանկավարժական-կրթական նշանակութիւն։ Զանազան ձևերի, գոյների և գեղեցկութեան կողմից մարկաները մարդկանց մէջ ճաշակ են զարթեցնում և ցոյց տալիս մի ազգի, երկրի ժողովրդի գեղարուեստական որչափ զարգացած լինելը։ Բացի գեղարուեստական նշանակութիւնից նորանցով մարդս գաղափար է կազմում մի ազգի պատմութեան, գրականութեան և աշխարհագրութեան վերայ։ Նոքա տանում են մարդուս միտքն ու հոգին ձգում հեռու և մօտիկ երկիրների ժողովրդոց վերայ և մեր ուշադրութիւնը դարձնում մի երկրի և ժողովրդի կազմակերպութեան վերայ, նոցա գործածական դրամների և նշանադրոշմների տեսակի, նոցա գրականութեան, թուանշանների, նոցա անհրաժեշտ հաղորդակցութեան տե-

ղերի, նոցա վաճառականական գաղութների և այդտեղ ապրող բազմաթիւ ժողովրդոց նիստ ու կացի վերայ։ Նամակագրաշների հաւաքումը կարելի է հաստատօրէն ասել զարգացման մի կանոնաւոր ճանապարհ է, որով հաւաքողը ընդարձակում է իր մտքի և հոգու պաշարը, մտքով հեռու գնում և տեսնում մի ժողովրդի կեանքը իր ամբողջ էութեամբ։ Ահա այդ պատճառով զանազան կրթական հաստատութեանց մէջ դուք կ'տեսնէք նշանագրաշների կատարեալ հաւաքածուներ, որոնք իրանց կանոնաւորութեամբ, գեղեցկութեամբ հիացմունք են պատճառում հանդիսատեսներին։

Ա. ՍԱՐԿ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ենովք Թէյեան. — քերական ընթերցարան. Կ. Պոլիս. Մատթ. տպ. 1898.

Հաշուէկշիռ 1898 թ. օգ. 20—նոյ. 20 Եկատերինոդար քաղաքում ժողովուած և աղքատներին բաժանուած գումարների։

Ս. Զելինսկի. Հաւ. Թիֆլիս. 1898.

— Матеріалы по народной медицинѣ у Армянъ нѣкоторыхъ мѣстностей Закавказья. Тифлисъ. 1898.

Արպետ. Ժառանգներ. Ն. Նախիջևան. 1899.

Ցար. Թումանեան. Հանաք ու դանակ. Թիֆլիզ. 1899.

Կ. Կոստանեան. Մկրտիչ Նաղաշը և իւր տաղերը. Վաղարշապատ. 1898.

Ալէքս. Ծատուրեան. Բանաստեղծութիւններ. Բ. հատոր. Մոսկուա. 1898.

Հաշիւ Կովկասի Հ. բարեգ. ընկ. Ախալցխայի ճիւղի 1898. Ախալցխա. 1898.

Մատթէոս Ուռհայեցի. Վաղարշապատ 1899.

Ց. Ֆ. Ճուղուրեանց. Աղա սուրբ Սարգիսը. Թիֆլիս 1899.

Թանգարան Հայկ. հին և նոր դպրութեանց Բ. անկանոն գիրք նոր կտակարանաց. Վենետիկ 1898.

[illegible]